

Նյութոնի երկրորդ օրենքը ֆիզիկայի հիմնարար օրենքներից մեկն է, որի օգնությամբ բացատրվում են ինչպես տիեզերքում, այնպես էլ Երկրի վրա, մեր շրջապատում հանդիպող տարատեսակ մարմինների շարժումները: Իմանալով տվյալ մարմնի վրա ազդող ուժերը՝ Նյութոնի երկրորդ օրենքի օգնությամբ մենք կարողանում ենք հաշվել մարմնի արագացումը ժամանակի կամայական պահին, իսկ վերջինիս օգնությամբ որոշվում են նաև մարմնի արագությունն ու կոորդինատները ժամանակի կամայական պահին: Դրա համար պետք է հայտնի լինեն մարմնի սկզբնական արագությունն ու կոորդինատները:

Այսպիսով, մեխանիկայի հիմնական խնդրի լուծման ալգորիթմը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով.

